# ԳՐԱԿԱՆ

## ԱՆՑԻԾԱՑԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### 1. Մաշտոց Ցունաց:

*Ժամանակին համբաւաւոր գիտնական, Գրիգոր պատուելի Փէշտիմալճեանի երկասիրութիւններէն, տպագրութեամբ հրատարակուած՝ չորս գիրք միայն ծանօթ էին մեզ մինչեւ այսօր. 1. Բառգիրք 1841ին,* 2. Քերականութիւն 1845ին, 3. Լուսաշաւիղ 1848ին. 4. Տրամաբանութիւն 1854ին:** Թէեւ մեծանուն պատուելին ունի նաեւ գրական ու պատմական զանազան հատուածներ ու ծանօթութիւններ այլեւայլ հրատարակութիւններու մէջ:*

*Բայց այս յիշատակուած գրքերէն յառաջ, գիտնական պատուելին, 1831ին, հրատարակած է Մաշտոց մը, որ ցայս վայր, կարծենք, անյիշատակ թողուած է: Սա հաւաքական թարգմանութիւնն է Ցունաց մեծ Մաշտոցին՝ Էվխոլոյիոն քառածալ գիրքով եւ 430 էջերով լաւ տպագրութիւն մըն է: Ցիշատակարան չունի, բայց յառաջ կը բերենք գրքին ճակատն, ի գիտութիւն բանասիրաց:*

*Ճակատը. — "Մաշտոց Հատընտիր հաւաքմամբ հանեալ ի մեծ Մաշտոցէն Ցունաց, որ կոչի Էվխոլոյիոն: Նորոգ թարգմանեալ եւ սրբագրեալ աշխատասիրութեամբ Անաստասայ մեծիմաստ վարժապետին Ցունաց, եւ պատուելի Գրիգոր Դպրի Փէշտիմալճեան: Ջանիւ եւ արդեամբ բարեպաշտօն եւ աստուածասէր սառաֆ Անաստաս աղային, որ ի Ս. Գէորգայ Վանից գիւղէն՝ Ակնայ քաղաքին: Հրամանաւ Տեառն Ագաթանգեղոսի Արքազան Արքեպսի եւ տիեզերական Պատրիարքի Ցունաց: Եւ ի Պատրիարգութեան Հայոց Տեառն Կարապետի Ամենապատիւ եւ Վեհափառ Արքեպիսկոպոսի, 1831 Տպագրեալ ՌՄՁ: յՕրթագիւղ, ի Տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ:"*

### 2. Մաշտոց Հայոց:

*Մեր եկեղեցական գրքերու կարգէն, թերեւս ամէնէն բազմաթիւ տպագրութիւն տեսնողներէն մին ալ է՝ Մաշտոցը, թէեւ Հայկ. Մատենագիտութիւնը՝ սկիզբէն մինչեւ 1800ին, Մաշտոց եւ Ծիսարան անուան տակ՝ հինգ, եւ 1800էն մինչեւ 1883ին ալ՝ նոյնպէս հինգ, որով ընդ ամէնն տասն տպագրութիւն միայն կը յիշատակէ: (Տես անդ, եր. 287, 288 եւ 401—404.) սակայն յիշեալ գիրքն ըստ մեր ցուցակին՝ մինչեւ 1800 թուականին՝ տասն եւ երեք, եւ 1800էն մինչեւ 1886 թուականին ալ՝ տասն եւ երկու, ընդ ամէնն քսան եւ հինգ տպագրութիւն ունեցած է: Յառաջ կը բերենք այս տեղ մեր ցուցակն, յաւելլով միանգամայն թէ՝ թերեւս մեր այս ցուցակն ալ թերի ըլլայ, եթէ ի նկատի առնուի, 3րդ եւ 4րդ տպագրութեան հետ, 7րդ եւ 8րդ տպագրութեանց ժամանակամիջոցի տարբերութիւններն, որոնք իրարմէ երկար տարիներու միջոցներ ունին, մին 28 տարի, միւսն 50 տարի:*

*Ահաւասիկ մեր ցուցակն: Մաշտոց.*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ա. | Տպգ. | 1569ին | ի Կ. Պոլիս | ի Տպարանի Աբգարու |
| Բ. | » | 1667ին | յԱմստերդամ | » Ոսկանայ |
| Գ. | » | 1676ին | ի Մարսիլիա | » » |
| Դ. | » | 1704ին | ի Կ. Պոլիս | ի Տպարանի Աստուածատուրի |
| Ե. | » | 1711ին | » | Տպարանն անծանօթ |
| Զ. | » | 1714ին | » | ի Տպարանի Աստուածատուրի |
| Է. | » | 1726ին | » | ի Տպարանի Աստուածատուրի |
| Ը. | » | 1775ին | » | Տպարանն անծանօթ |
| Թ. | » | 1784ին | » | ի Տպարանի Յովհ. եւ Պօղոսի[1] |
| Ժ. | » | 1784ին | » | ի Տպարանի Յովհ. եւ Պօղոսի (այլ օրինակ) |
| ԺԱ. | » | 1785ին | » | ի Տպարանի Յովհ. եւ Պօղոսի (այլ օրինակ) |
| ԺԲ. | » | 1790ին | ի Թրիեստ | ի Տպարանի Մխիթարեանց |
| ԺԳ. | » | 1792ին | ի Կ. Պոլիս | Տպարանն անծանօթ |
| ԺԴ. | » | 1807ին | » | ի Տպարանի Յովհ. եւ Պօղոսի (2 հատոր)* |
| ԺԵ. | » | 1814ին | » | Տպարանն անծանօթ ** |
| ԺԶ. | » | 1824ին | » | Տպարանն անծանօթ *** |
| ԺԷ. | » | 1831ին | ի Վենետիկ | ի Տպարանի Մխիթարեանց |
| ԺԸ. | » | 1834ին | ի Կ. Պոլիս | ի Տպարանի Պ. Արապեան |
| ԺԹ. | » | 1848ին | » | ի Տպարանի Պ. Արապեան |
| Ի. | » | 1849ին | » | ի Տպարանի Միւհէնտիսեան |
| ԻԱ. | » | 1852ին | » | ի Տպարանի Միւհէնտիսեան |

* 1844—46ին: — Հ. Գ. Գ.:

** Գր. Փէշտիմալճեան հրատարակած է նաեւ 1. Քերականութիւն հայ լեզուի, 1829, 1835 եւ 1845: 2. Կրթութիւն քաղաքավարութեան, 1829: 3. Քրիստոնէական Բ. տպ. 1861, 1868, 1872: 4. Սաղմոս, 1838 վերստին տպեալ: 5. Գիրք սաղմոսաց Դաւթի հայերէն-տաճկերէն, վերստին տպեալ, 1860: — Հ. Գ. Գ.:

[1] Յովհ. եւ Պօղոսի տպարանէն, 1784ին եւ 1785ին հրատարակուած այս երեք Մաշտոցներն իրարմէ տարբեր են: Միոյն էջերու թուահամարներն երով, միւսինը՝ [illegible] են: Թէեւ միեւնոյն երես, միեւնոյն թուղթք եւ միեւնոյն յիշատակարաններն ունին, բայց միոյն մէջ Մաշտոցին գին նշանակուած է չորս տող առանձնաբար մը: Իսկ մէկն ալ բոլորովին տարբեր չափով եւ տառեր թղթերով է:

* Միայն մէկ հատը. 4o: — Հ. Գ. Գ.:

** Յօհաննիսեան Պօղոսի, 2 հատը: — Հ. Գ. Գ.:

*** ՅՕրթագիւղ, Արապեան Պօղոսի: — Հ. Գ. Գ.:

digitised by A.R.A.R.@

| | | | |
|---|---|---|---|
| ԻԲ. Տպգ. | 1857ին | ի Կ. Պոլիս | ի Տպարանի Միւհէնտիսեան |
| ԻԳ. „ | 1876ին | Վաղարշապատ | ի Տպարանի Մայր Աթոռոյ* |
| ԻԴ. „ | 1886ին | յԵրուսաղէմ | ի Տպարանի Ս. Յակոբեանց |
| ԻԵ. „ | 1848ին | „ | ի Տպարանի Ս. Յակոբեանց |

Այս վերջինն միայն Մկրտութեան կանոնն է, որ Երուսաղէմի Զաքարիա Պատրիարքն հրատարակել տուաւ, եւ որ մեծ աղմուկ հանեց Ազգին մէջ, եւ Ազգ. Պատրիարքարանի կողմէն ալ այն ժամանակ հաւաքուեցան, եւ գործածութիւնը արգիլուեցաւ, որոյ մասին համառօտ տեղեկութիւն մը ունինք գրել յարմար ժամանակին։

Մեր յառաջ բերած սոյն քսան եւ հինգ տպագրութեանց մեծագոյն մասն, այժմ ունինք ի ձեռին, որոնց ճակատներն ու յիշատակարաններն եւայլն, մեր "Հայերէն հին տպագրութիւնք„ անուն երկու հատոր աշխատասիրութեան մէջ ամբողջովին պիտի տեսնուին, երբ ի դէպ ժամանակի հրատարակութեան տանք նոյն գործն։**

### 3. Ջէն Հոգեւոր։

Յակոբ Նալեան, յիշատակաց արժանի, մեծանուն Ս. Պատրիարքի երկասիրութիւններէն Ջէն Հոգեւոր անուն գրքին համար, ասկէ յառաջ, միայն երեք տպագրութիւն ունեցած ըլլալն ծանօթացուցած էինք (Տե՛ս Ա. Մամուլ 1896, երես 589), այժմ մեր ձեռքն անցած ուրիշ օրինակէ մը կը տեսնենք՝ թէ այդ գիրքն չորրորդ տպագրութիւն մըն ալ ունեցած է։ Այս վերջին տպագրութիւնն ալ եղած է ի Կ. Պոլիս, ի Տպարանի Միւհէնտիսեան եւ ի թուականին 1859։ Ուրեմն այժմ գիտելի է՝ թէ Ջէն Հոգեւորն տպագրուած է չորս անգամ, Ա. 1757ին, Բ. 1787ին, Գ. 1820ին եւ Դ. 1859ին, ի Կ. Պոլիս։***

Տ. Վ. Գ.

* Մաշտոց ձեռնադրութեան: — Հ. Գ. Գ.:

** Բաց ի վերոյիշեալներէն Մաշտոց տպուած է՝ 1. Վենետիկ, 1513 (տես՝ Մատենագիտութիւն, էջ 402—403): 2. Զմիւռնիա (՞) 1676: 3. Ամստերտամ, Վանանդեցի 1687: 4. Կ.Պոլ. 1744: 5. Մաշտոց ձեռնադրութեան, Կ.Պոլ. 1752: 6. Կ.Պոլ. (՞) 1769: 7. Վաղարշապատ 1836: 8. Վենետիկ, 1840: 9. Շուշի, 1858: 10. Երուսաղէմ, 1879: 11. Վիեննա, 1880:

1777ին ի Վաղարշապատ տպուած է "Կարգ թաղման հայրապետաց...„ որ Մաշտոցի մասն է:

Մաշտոցն 1892ին եւ 1894ին Վաղարշապատ կրկին տպուած է: — Հ. Գ. Գ.:

*** "Ջէն Հոգեւոր„ տպուած է նաեւ 1844ին, Կ.Պոլ. Արապեան տպարան: — Հ. Գ. Գ.:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ 1860ԷՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Շարունակութիւն)

### 11. ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ

*Երկշաբաթաթերթ, Մոսկուա, 1861—64:*

*Խմբ. Ք. Մսերեանց:*

*Տպ. Լազարեան եւ կայսերական:*

Զարմայր Մսերեանց իւր Ճռաքաղ ամսաթերթին հետ 1861 Օգոստ. 10ին հրատարակել սկսաւ Համբաւաբեր Ռուսիոյ թերթն։ Ասիկայ երկիչեան էր՝ մեծ քառածալ երկու թուղթ. կը հրատարակուէր ամէն ամսոյ 10ին եւ 20ին. գինը Ճռաքաղին հետ միասին 5 րբ. էր։ Նպատակն էր՝ Ճռաքաղի մէջ մատենագրական եւ բանասիրական յօդուածներ ամէն ամիս հրատարակելէն զատ, ասոր մէջ երկու շաբաթը անգամ մը գլխաւորաբար Ռուսիոյ, եւ երկրորդաբար Եւրոպիոյ քաղաքական նաեւ ազգային դէպքերու համբաւը բերել, առանց իւր կողմանէ խորհրդածութիւն մ'աւելցընելու։

Ա. Տարւոյ Թ. 9էն սկսաւ խմբագիրն երբեմն երբեմն զաւեշտական պատկերներ ալ դնել։ Ա. Տարին ունեցաւ 24 թիւ։

1862 Օգոստ. 1ին սկսաւ Բ. Տարին, որ 10 օրն անգամ մը կը հրատարակուէր՝ նոյն բովանդակութեամբ։ Բայց որովհետեւ այս միջոցին Ճռաքաղն դադրեցաւ, նոյնին համար պատրաստուած քանի մը մատենագրական յօդուածներն ասոր մէջ տպագրուեցան։ 1862 Դեկտեմբերի երեք թուերն (40, 41, 42) միասին հրատարակուեցան, եւ ծանուցուեցաւ՝ որ այս կիսամեկով կը դադրի թերթը, վասն զի Լազարեան ճեմարանի տպարանը Մ. Էմինի ձեռքէն օտարազգւոյ մ'անցած էր, որ թերթին տպագրութիւնը կը մերժէր, աւելի շահաւոր համարելով նոյն յայտարարութիւն տպագրել, քան այս հայերէն թերթը։

Սակայն անխոնջն Ք. Մսերեան յաջողեցաւ 1863 Ապրիլ 20ին թերթին Գ. Տարին (Թ. 43) հրատարակել Մոսկուայի համալսարանի կայսերական տպարանը՝ քիչ մ'աւելի մեծ դրիւք, քառիջեան, տարեկանը 6 րբ., իբրեւ կիսամսեայ։ Սոյն տարին միայն 54 բաժանորդ ունէր թերթը,[1] եւ այս պատճառաւ շարունակութիւնը (Թ. 44) նոյն տարւոյ հազիւ Օգոստ. 3ին սկսաւ կանոնաւորապէս։

1864 Մայիսէն մինչեւ Սեպտ. առ ժամանակ մի դադրեցաւ, եւ Սեպտ. 26ին դար-

[1] Արշալոյս Ար. 1863, Թ. 710։

digitised by A.R.A.R.@

ձեւալ շարունակեցաւ մինչեւ նոյն տարւոյ Նոյեմբեր 16, երբ Թ. 69 հրատարակեցաւ այս ծանուցմամբ՝ թէ "Այս համարաւս վերջանում է Հիւսիսափայլիս 3ᵉ տարին„ որ նաեւ թերթին մահուան բօթն եղաւ։

Հիւսիսափայլ Ռուսիոյ, ինչպէս ըսինք, 1862էն սկսեալ նաեւ քանի մը մատենագրական կտորներ հրատարակեց, զոր յառաջ կը բերենք։

Ցուցակ որքանութեան ազգի Հայոց ի վիճակին Ատրպատականի ի Պարսկաստան, Հիւսիսափայլ Ռուսիոյ, 1862, Թ. 30։

Հատուածք ի Դատաստանագրոց Մխիթարայ, Թ. 31, 32։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ Վարդապետն Սարգիս, 33։

Թուղթ Տն. Փիլիպպոսի Հայոց Կաթողիկոսի առ Ինովկ. Փ. Պապ Հռովմայ, 34, 35, 36։

Հայոց ազգի քաղաքական վիճակը. (Շարունակութիւն Ճռաքաղի 1862, էջ 73, 89). 37, 38, 39։

Լատին արձանագրութիւն Մարկոս Աւրելիոս կայսեր (Թ. Քր. 162) ի Վաղարշապատ, 37։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ Սթղկան. Ատրուոյ, 40։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ Իշխանն Մանիկոնեան, 40։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ Հ. Սամուէլ, 40։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ կրօնաւորն Խնասին, 40։

Գր. Մագիստրոսի Թուղթ առ Վեստն Վահրամ որդին իւր, 40։

Արտասանութիւն Խոսրովկայ Թարգմանչի ի Մենամարտութիւնն Դաւթի եւ Գողիաթու, 40։

Յակովբայ Երէցու Տաղ վասն կենաց մարդկան, 40։

Տեղեկութիւնք Նոր-Արմաւիրի Չերքեզահայոց մասին, 1863, Թ. 47։

Թուղթ Մովսէս Կաթողիկոսի առ Վլադիսլաւ արքայ Լեհաց (Թ. Քր. 1632), 48։

Պատկեր վիմագրօշմ բեւեռագրի արձանագրոց, օրինակեալ 1. Կթանոց գիւղի մօտ. 2. Կատայից Էլառ գիւղի բերդի մօտ. 3. Աղամխան գիւղի մօտ, 53։

Շահկերտցի Յովհաննէս իշխան, 1864, Թ. 58։

Հայկական սուր Կիլիկեանց ժամանակէն, 60։

Ստորագրութիւն Օշական գեղջ, 65, 66, 67, 68։

## 12. ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

*Երկշաբաթաթերթ, Կ. Պոլիս 1861—63:*

*Խմբ. Գ. Էրանեան եւ Ն. Թաշճեան:*

*Տպ. Ռ. Յ. Քիւրքճեան:*

Գաբրիէլ Յ. Էրանեան եւ Նիկողոս Ս. Թաշճեան՝ ծանօթ երաժշտագէտք, 1861 Սեպտեմբեր 1ին Քնար հայկական անուամբ միածալ երկու թուղթ երկշաբաթաթերթ մը հրատարակեցին, որ կը բովանդակէր երգեր եւ պարերգեր "թէ եւրոպական եւ թէ հայկական երաժշտութեան համառօտ սկզբունքներով։„ Այս թերթն իւրաքանչիւր ամսոյ 1ին եւ 15ին կը հրատարակուէր. Ա. Վեցամսեայ շրջանը կ'արժէր 40 ղրշ.։ Խմբագիրք 3ᵉ թուով ծանուցին՝ որ բաժանորդաց համար ձրի դասախօսութիւններ պիտի ընեն երաժշտութեան վրայ։

Հրատարակութիւնս իւր Ա. Վեցամսեայն բոլորեց բաւական դժուարութեամբ. 1862 փետրուար 15ին վերջին 12ᵉ թիւն հրատարակելով։ Այս շրջանի վերջին թուերուն սկսած էր գործակցիլ նաեւ Տիգրան Չուխաճեան։

1862 Մարտին թերթիս օգնելու եւ Բ. Վեցամսեայն կանոնաւորապէս շարունակելու համար՝ ձեռամբ Գ. Էրանեանի "Երաժշտական ընկերութիւն„ մը կազմուեցաւ։[1] Այս մասին ժամանակին հայ լրագիրներուն մէջ հետեւեալ ծանուցումը հրատարակուեցաւ. "Երաժշտութեան ճաշակը Հայոց մէջ տարածելու եւ ազգային երգեր հրատարակելու, նուագածուներ յառաջ բերելու նաեւ Քնար հայկական հանդէսը կանոնաւոր կերպիւ եւ տետրակները ժամանակին հանելու նպատակաւ ազգիս մէջ "Երաժշտական ընկերութիւն„ մը կազմուեցաւ։ Սոյն ընկերութեան անդամ գրուիլ ուզողը պէտք է Քնար հայկականի բաժանորդ գրուի, որուն վեցամսեայ գինն է 60 ղուրուշ, եւ պիտի հրատարակուի քառածալ եւ մեծ դիրքով ամսին մէկ անգամ։„ Այս ընկերութեան հիմնադիր ժողովոյ անդամներուն մէջ կը տեսնենք ժամանակին նշանաւոր անձնաւորութիւնները։ "Ընկերութիւնը յանձնաժողով մ'ալ ունի, որուն պաշտօնն է Քնար հայկականի մէջ հրատարակուելիք երգոց ընտրութեանն ու քննութեանը հսկել եւ որուն անդամներն են հետեւեալ ուսումնական անձինք, (Թ. Նազարեան, Մ. Մամուրեան, Մ. Պէշիկթաշլեան, Յ. Ոսկան, Ս. Հէքիմեան, Ստ. Փափազեան.) իսկ Քնար հայկականի երաժշտական մասին հեղինակներն են Պ. Տիգրան Չուխաճեան եւ Պ. Գաբրիէլ Երանեան։„

"Երաժշտական ընկերութիւնը„ թերթին Բ. Շրջանին 1 թիւն հրատարակեց 1862 Ապր. 30 թուականաւ. հեղինակք նշանակուած էին "Տիգրան Չուխաճեան, Գաբրիէլ Երանեան։„ 1862 Հոկտ. 13ին տաղանդաւոր երաժշտագէտ Գ. Էրանեան (35 տարեան) վախճանեցաւ, եւ Քնար Հայկականը կը կաղար։ Ընկերութեան անդամները նոյն տարւոյ Դեկտ. 21ին Արեւելեան թատրոն "ի յիշատակ Գաբրիէլի Երանեան եւ ի նպաստ Քնար հայկականի„ ներկայացում մը տուին, որ յաջողութիւն ունեցաւ։[2]

1863 Օգոստոսին Քնար հայկական, որ նախորդ տարիներու մէջ 4000 ղրշ. վնաս ունեցած էր, վերստին սկսաւ հրատարակուիլ նի-

[1] Մասիս, 1862, Թ. 530, 534։
[2] Կիլիկիա, 1863, Թ. 1։

digitised by A.R.A.R.@

կողմ Թաշճեանի ձեռօք՝ իբրեւ վերամնեայ, (20 ղրշ.)[1]

Այսչափ են այս թերթին վրայ մեր ունեցած տեղեկութիւնները։ Բ. Շրջանի քանի մը թուերէն կ'երեւայ՝ որ հրատարակիչք "Համառօտ հայկական երաժշտութիւն„ (յօդուածագիր՝ Հ. Պ. Չերչիեան) եւ "Համառօտ եւրոպական երաժշտութիւն„ յօդուածներով՝ տեսական եւ գործնական դաս կ'աւանդէին։

## 13. ՑՈՒԽԵՐԺՈՀԱՐՍ

*Երկշաբաթաթերթ, Զմիւռնիա, 1862։*

*Խմբ. Ս. Փափազեան։*

*Տպ. Տէտէեան։*

Սարգիս Փափազեան եւ Թ. Աւետիս 1861 Յուլիս 29 թուականաւ Յայտարարութիւն մը հրատարակեցին, ծանուցանելով թէ երեք ամսէն Յուխերժահարս անուամբ պատկերազարդ հանդէս մը պիտի հրատարակեն, որ առանձնապէս հայ կանանց նուիրեալ պիտի ըլլայ, Փարիզի մօտաները պատկերով պիտի ցոյց տայ, եւ բաց ի զանազան անպաճոյճ հրատարակութիւններէ, նաեւ արուեստաւորներու՝ արուեստ, վաճառականի՝ վաճառականութիւն, խանութպաններուն՝ քաղաքագիտութիւն պիտի սորվեցնէր, եւ Զմիւռնիոյ ծնունդքն ու մահերը պիտի զեկուցանէր։[2]

Թերթին առաջին թիւն՝ 1862 Յունուար 1 թուականաւ՝ 1861 Դեկտ.ի սկիզբը Տէտէեանի տպարանը լոյս տեսաւ, Ցուխերժահարս, հանդէս կիսամսեայ, վիպասանական, տրտմեցուցիչ եւ զուարճալից անուամբ, մեծ քառածալ դիրքով (4 թուղթ)։ Ճակատը կը զարդարէր Զմիւռնիոյ պատկերն, իսկ խմբագիր-տնօրէն նշանակուած էր միայն Ս. Փափազեան։ Իւրաքանչիւր թուոյն մէջ կար ի Փարիզ տպուած նորաձեւութեանց գունաւոր պատկեր մը։ Բովանդակութիւնն էր բաւական անծանծ յօդուածներ ընտանեկան կենաց վերաբերեալ, թարգմանութիւններ եւ արուեստագիտական մանրալուրք։ Զմիւռնիոյ Ջգաստութիւնը շուտով խզեց հրապարակագրական այս հրէշին կեանքը[3] 1862ին Օգոստոսի մէջ, 14 թիւ հրատարակուելէն ետեւ։[4]

---

[1] Ջէյհուն, 1863, թ. 27։

[2] Թատրոն, 1861, թ. 9։

[3] Արձագանք, 1882, էջ 345։

[4] Հմմտ. Դիւան, 1862, թ. 3։

## 14. ԳԱՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*Երկշաբաթաթերթ, Զմիւռնիա 1862։*

*Խմբ. Գր. Պ. Պարտիզպանեան։*

*Տպ. Տէտէեան։*

Տիգրան Յ. Գարագաշեան եւ Գր. Պ. Պարտիզպանեան 1862 Յնր. 20ին յայտարարեցին՝ որ յաջորդ Փետր. ամսոյ 1ին Գարուն Հայաստանի անուամբ թերթ մը պիտի հրատարակեն, որ "Բարոյական, բանասիրական եւ առեւտրական„ վերնագիրները պիտի ունենար եւ "հեռու պիտի ըլլար կրօնական վէճերէ եւ ազգային բանադատութիւններէ։„[1]

1862 Փետր. 5ին ի Զմիւռնիա Տէտէեանի տպարանը լոյս տեսաւ այս թերթը[2] յիշեալ վերնագրով, վերամնեայ բաժանորդագին 8 ֆր.[3]։ Խմբագիրներն էին Գր. Պ. Պարտիզպանեան եւ Տ. Գարագաշեան։[4]

Գարուն Հայաստանի իւր նմաններուն մէջ կարող էր աւելի համակրութիւն մը գտնել՝ թարգմանական անմեղ գրութիւններովը։ Սակայն այս ալ Կ.Պոլսոյ չգիտեմ ո՛ր Ջօրութեան հաճոյ չեկաւ. վասն զի 1862 Նոյ.ի սկիզբը Կ.Պոլսէն եկած հրահանգաց համեմատ խափանուեցաւ՝ հրամանագիր չունենալուն պատճառաւ։[5] Այսպէս այս թերթն իբր 19 թիւ ունեցած կ'ըլլայ։

## 15. ԵՂԲԱՅՐԱՍԷՐ

*Տասնօրեայ, կազմաթա 1862—63։*

*Խմբ. Ե. Տէր-Յարութիւնեան։*

*Վիմատիպ վիմագրատան "Եղբայրասիրի։„*

Հնդկահայ հասարակութիւնն երկար ատեն լռած էր։ Հազիւ երբեմն երբեմն այն կողմերէն եկած նամակներ՝ քանի մը տեղեկութիւններ կը բերէին հայ հասարակութեան։ 1861ին ներքին երկպառակութիւնք եւ Նոր Ջուղայի Թադէոս Առաջնորդին վարմանց դէմ տժգոհութիւնք սաստկացան այնտեղ, եւ Անգղիոյ մէջ սկսան երեւալ երկար թղթակցու-

---

[1] Մեղու Բիւզանդեան, 1862, թ. 10։

[2] Այս առթիւ "Փունջ„ (1862, թ. 61) խրատամբ կը գրէր. "Առանց չափազանցութեան կրնամք ըսել թէ, Զմիւռնիոյ Հայոց կէսը խմբագիր, օրագրի թղթակից, հեղինակ, թարգմանիչ, ուսուցիչ եւ ուսանող են, հարկաւ միւս կէսն ալ ընթերցող պիտի ըլլին։„

[3] Կիլիկիա, 1862, թ. 4։

[4] Մասիս, 1862, թ. 525։ Մեր ձեռքն եղած մի միակ թուոյն (7) վրայ կը գտնենք միայն Գր. Պ. Պարտիզպանեան, կ'երեւայ թէ Տ. Գարագաշեան քիչ մ'ետքը հեռացած է թերթէն։

[5] Արշալոյս Ար., 1862, թ. 688։

digitised by A.R.A.R.@

թիւններ։ Այս տխուր լուրէն հետ Արշալոյս Արարատեան[1] կ'աւետէր՝ որ Եղիազար Տէր-Յարութիւնեան՝ գրաբար վիմատիպ [illegible] լէտ-ֆէր մը սկսած է հրատարակել ի Կալկաթա, առաջին թիւն ի լոյս հանելով 1862 Մարտ 5 թուականաւ։ Լրագրին անունն էր Եղբայրասէր, բովանդակութիւնը քաղաքական, բանասիրական եւ ընտանեկան թերթիկ։[2] Դիրքն ի սկզբան մեծ քառածալ 4 թուղթ էր. բայց երբ 1863 Յունիս 5ին 43ᵀ թուէն սկսեալ շաբաթաթերթ եղաւ եւ ուրբաթ օրերն սկսաւ հրատարակուիլ, երկու թղթի վերածուեցաւ։ Տարեկան բաժանորդագինն էր 24 ռուփի։ Կը հրատարակուէր ամէն ամսոյ 10, 20 եւ 30ին։

Թերթը կը խոստանար հեռու կենալ վիճաբանութիւններէ եւ չհրատարակել ընդդիմախօսութիւններ որեւէ ազգային խնդրոյ մէջ. “վասն զի, — կ'ըսէ խմբագիրն 1862 փետր. 4 թուով հրատարակած վիմատիպ յայտարարութեան մէջ՝ որով Եղբայրասիրէի հրատարակուելիքը կը ծանուցուէր, — Նպատակ լրագրին է պաշտպանել զազգ եւ զեկեղեցի մեր եւ պերճացուցանել զՀայկեան լեզու մեր.„ Թէեւ թերթին մէջ անպակաս են այնպիսի ընդդիմախօսութիւններ։ Նոյն Յայտարարութեան մէջ կ'ըսուի նաեւ. “Ոչ ի սակի շահուց կամ անձնաւոր օգտի ինչ իմում, այլ վասն տալոյ պայծառութեան լեզուի Ուսման եւ Գրագիտութեան ազգի մերոյ ի Հնդիկս եւ յայլ տեղիս...„ կը հրատարակուի թերթն, եւ կը յուսայ յետոյ հաստատել ազգային տպարան մը։

1863 Ապրիլ 10ին 37ᵀ թուով Եղբայրասէր Բ. Տարին սկսաւ, խոստացաւ այնուհետեւ աւելի աշխարհաբար գրել, “որպէս զի թէ գիտուն կոչեցեալ իմաստակք քաղաքիս չկամիցին շահել ինչ անտի, գէթ հասարակ ժողովուրդն ի հեռաւոր տեղիս ընթերցեալ գիտասցեն զներկայ վիճակ Հնդկաբնակ հայոց։„[3] Նոյն տարւոյ Յունուարէն սկսեալ ի Կալկաթա երկրորդ հայերէն լրագիր մը սկսած էր հրատարակուիլ Արեւելեան Հնդկաց լուսաբեր անուամբ, ի ձեռն Յովսեփայ Ա. Սէթեան։ Այս երկու լրագիրներու մէջ առաջին օրէն սկսաւ կռիւը։ Եղբայրասէր Նոր Ջուղայու Առաջնորդ Թադէոս Արքեպիսկոպոսին, ինչպէս նաեւ այլ եկեղեցականաց կաշառակերութիւնն, զեղծ վարքն, բռնակալութիւնն, ժողովրդեան խնամ չտանիլն եւ այլն թէ խմբագրական յօդուածներով եւ թէ թղթակցութիւններով յերեւան կը հանէր եւ ուղղութիւն կը պահանջէր. իսկ Արեւելեան Հնդկաց լուսաբերը զասոնք ծածկել եւ պաշտպանել կը ճգնէր։ Կռիւն այնչափ յառաջ գնաց, որ անձնական հակառակութեան յանգեցաւ։ Եւ երբ Եղբայրասէր իւր 42ᵀ թուով Յ. Ա. Սէթեանը վատահամբաւող անստորագիր Նամակ մը հրատարակեց, որուն մէջ հարցման ձեւով քանի մ'եկեղեցականաց վարքը՝ ինչպէս նաեւ չորրորդ հարցմամբ անանուն անձի մ'ընտանեկան բարքը կը յուզէր, Յ. Ա. Սէթ զայս իւր անձին համար առնլով՝ ի դատ կոչեց զՏէր-Յարութիւնեան, որ եւ ըստ օրինաց՝ 1863 Օգոստ. 1—2ին դատապարտեցաւ երեք ամիս բանտի եւ 500 ռուփի (50 անգղ. ոսկի) վճարելու։[1] Այս վճռոյն գործադրութեան մասին ճիշդ տեղեկութիւն չունինք. այսչափ գիտենք՝ որ մինչեւ Հոկտեմբերի սկիզբը Եղբայրասէր տակաւին կանոնաւոր կը շարունակուէր։ Եղբայրասիրէի 62ᵀ թիւն (16 Դեկտ. 1863) վերջինն եղաւ, ինչպէս ինք խմբագիրը 1863 Դեկտ. 22 թուականաւ կը գրէ Արշալուսոյ խմբագրին.[2] “Յոլով յայտ առնեմ պատուելութեանդ, զի զկնի 62 թիւ Եղբայրասիրէի հրատարակութեանն, դադարեցուցաք զհրատարակութիւննորին, վասն զանազան պատճառաց որք անօգուտ են ի լոյս ընծայել. քանզի այսչափս որ գրեցաք եւ հրատարակեցաք յօգուտ Հնդկաբնակ եւ Ջուղայու հայոց՝ զի՞նչ շահեցաք, եթէ ոչ բազում թշնամիս, բանտ, տուգանս, եւ այլն. յումմէ՞ եւ յորպիսի անձնէ, թողումք ազգասիրաց եւ պատուաւորաց միայն գտանել եւ իմանալ։„

Եղբայրասէր Հնդկահայոց լրագիրներուն ընտիրներէն է։ Եթէ չնկատենք քաղաքական եւ բանասիրական քանի մը յօդուածներն՝ (Նաղաշ Յովնաթանի Տաղք, Թ. 31, 43։ Բաղէր օղլու Ղազարու Ջուղայեցւոյ (յամին 1747) ստանաւոր պատմութիւն տառապանաց Ջուղայեցւոց յերեւաց Նադիր Շահի Թ. 48, 49.) թերթն ամբողջ նուիրուած էր Հնդկահայ գաղթականութեան խնդիրներուն։ Այս խնդիրները, որ նաեւ նոյն գաղթականութեան անկման պատճառ եղան, ինչպէս կ'ըսէ խմբագիրը, տեղւոյն եկեղեցականաց անարժան վարմանց դէմ կը յառնէին, որոնց մէջ Եղբայրասէր պարտաւոր կը

[1] 1862. Թ. 673.

[2] Այսպէս պարտք կը համարիմ խորին շնորհակալութիւնս յայտնել Պր. Մեսրոպ Յ. Սէթեանցին. որ հաճեցաւ Եղբայրասիրէի Բ. Տարին Թ. 37—60 նուիրել մեր մատենադարանին եւ օրինակել 1862. Փետր. 4ին լոյս տեսած Վիմատիպ Յայտարարութիւնն.

[3] Եղբայրասէր, 1863. Թ. 37.

[1] Եղբայրասէր, Թ. 52. Արշալոյս Ար., Թ. 710.

[2] Անդ, 1864. Թ. 720.

digitised by A.R.A.R.@

համարէր ինքզինք՝ միշտ քննադատող եւ հալածող ըլլալու եւ պաշտպան կենալու յանիրաւի հալածուող եկեղեցականաց, ինչպէս պաշտպանեց Աւագերէց Յովհ. Քհն. Խաչիկեանն ընդդէմ Թադէոս Արքեպիսկոպոսի բռնաւորութեան, թէեւ չկրցաւ խուսափիլ անիրաւութեան վրէժխնդրութենէն։

(Շարունակելի։) Հ. Գ. Գ.

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

### ՏԷՆԻԶԼԻԻ, ՆԱԶԻԼԼԻԻ ԵՒ ԱՅՏԸՆԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Այտընի կուսակալութեան գլխաւոր քաղաքներուն մէջ, տարիներէ եւ դարերէ ի վեր հաստատուած Հայոց նախկին յիշատակագրութիւններն հետազօտելու համար, մեծաւ անհամբերութեամբ եւ փափաքանօք կը սպասէի դպրոցական արձակուրդի օրերուն։ Արդէն երկու տարիէ ի վեր ձեռք զարկած էի սոյն կուսակալութեան գլխաւոր տեղւոյն՝ Զմիւռնիոյ, հնագոյն արձանագրութիւններն օրինակելու, ի մի ամփոփելու, որուն ամբողջութեան համար բնականապէս Այտընի քաղաքին, Նազիլլի, Տէնիզլի, Էօտէմիշ, Պասմայա եւայլն, քաղաքներու յիշատակագրութիւններն ալ պէտք էր ժողվել։ — Յուլիսի 11երորդ օրն էր, երբ ներկայացայ տեղւոյս առաջնորդին, Գեր. Ներսէս Ծ. վրդ. Արսլանեանի՝ յանձնարարական մը խնդրելու. ամենայն սիրով եւ ուրախութեամբ տուաւ խնդրածս, որուն մէջ կը յանձնէր արժանապատիւ քահանայից՝ հետազօտութեանցս համար դիւրացընել ինձ ամէն միջոցները։ Երկրորդ օրը թողուցի Զմիւռնիան եւ կիզիչ արեւուն տակ շոգեկառքը կը տանէր զիս Տէնիզլի։ Հազար հուսկ ուրեմն բաղձացած տեղս եւ կարեւոր տեղեկութիւններն ամփոփելով դարձայ ի Նազիլլի, անկէ Այտըն եւ վերջապէս դարձեալ Զմիւռնիա։ Վախճանիս հասած էի. հաւաքեցի գտած հնագոյն արձանագրութիւնները։

Վերոյիշեալ երեք քաղաքաց դպրոցներուն վրայ համառօտ գաղափար մը կ'ուզեմ տալ "Հանդիսիդ„ ընթերցողաց, համեմատութիւն մ'ընելով իրենց ունեցած յառաջադիմութեան նկատմամբ։ Բարեբախտաբար երեք տեղեաց դպրոցներն ալ տակաւին չէին արձակած աշակերտներն, որով կրցայ տեսնել եւ իմանալ իրենց վիճակը։

Տէնիզլի ունի իւր դպրոցն եկեղեցւոյ պարտէզին մէջ. շէնքը կրկնայարկ է, յարկերն ալ դիմացէ դիմաց կրկին բաժանումներ ունին։ Երկրորդ յարկը միայն կը գործածուի իբր դպրոց, որուն կրկին սրահներէն մին մանչերու, երկրորդն՝ աղջիկներու յատկացուած է։ Աշակերտներու թիւն է 40—45 մանչ եւ 28ի չափ աղջիկ. ունին ուսուցիչ՝ Գըրդաղաճցի Հայկ Թաթիկեան անուն ազնիւ երիտասարդ մը, որ երկու տարիէ ի վեր կը կատարէ սոյն պաշտօնը՝ օգնականութեամբ տեղացի վարժուհւոյ մը։ Վեց կարգի բաժնուած են մանչերը, որոնք կը սորվին հայերէն եւ տաճկերէն լեզուները, թուաբանութիւն, սրբազան պատմութիւն եւայլն եւայլն։ Տղաք քննութեանց պատրաստուելու հոգերու մէջ եւ միայն քանի մ'օրէն ազատ ըլլալու յուսով քաջալերուած, երկու մէյ մը ճակատներուն քրտինքը սրբելու եռեւէք էին, երբ իրենց քանի մը հարցում առաջարկեցի. ամենայն յաջողակութեամբ փոքրիկ մանուկները պատասխանեցին հարցմանցս, կարդացին եւ գրեցին։ Տէնիզլիի Հայք տաճկերէն կը խօսին ընտանեաց մէջ. բայց դպրոցիս աշակերտները լաւ սորված են հայերէն եւ իրարու հետ՝ ինչպէս բնական է, կը խօսին հայերէն. կը յուսացուի որ քանի մը տարիէն ընտանեկան լեզուն ալ պիտի փոխուի հայերէնի, որուն կը բաղձան իրենք ալ։ Համեմատութեամբ՝ աղջիկները չունին այն յաջողակութիւնն, զոր ունին մանչերը, տեսայ իրենց ձեռագործները, ձեռագործի սկզբնաւորութիւններ էին միայն։ Վարժուհւոյն կատարեալ կրթութիւն չունենալուն կը տրուէր աղջկանց ետ մնալը։ Կրթական հաստատութեանս եւ ազգին յառաջադիմութեան նախանձախնդիր տեսայ եւ լսեցի Ստեփան Էֆ. Գէորգեան վաճառականը, որ լաւ ճանչցած է կրթական հաստատութեանց կարեւորութիւնը. ինքն է որ քաջալեր կ'ըլլայ ուսուցչին եւ հոգ կը տանի ամենայն կերպով դպրոցիս միշտ բաց մնալուն, գիտնալով՝ որ յարատեւ ուսումնը կը լեցընէ շատ մը պակասութիւն։

Նազիլլիի դպրոցն ալ եկեղեցւոյն պարտէզին մէջն է. նորակառոյց, միայարկ սրահ մըն է, ուր կը ժողվին թէ՛ մանչ եւ թէ՛ աղջիկ աշակերտները։ Աշակերտաց թիւն է 40, որոնցմէ 30 մանչ, մնացածներն աղջիկ են, առանց ամենուն վրայ դրուած է իբր ուսուցիչ Ակնեցի Եղիշէ Վարդանեան անուն երիտասարդ մը, որ ութ ամսէ ի վեր սկսած է տեղւոյս սոյն պաշտօնը։ Իւր եռանդեան հակառակ տակաւին աշակերտք յառաջադիմութեան երկրորդ քայլն առած չեն։ Հոս ալ կը սորվին միայն հայերէն եւ տաճկերէն լեզուներն եւ նախակրթարանի յատուկ գիտութիւնները։ Շատ ցաւալի երեւցաւ երբ տղոց հանդստեան ժամանակ իրարու հետ տաճկերէն խօսիլը լսեցի. բաց աստի տասը՝ տասներկու տարեկան աղջկանց պարզ կարդալ առաջարկեցի, պատասխանն եղաւ՝ "չենք կրնար." "ինչո՞ւ չես կրնար կարդալ„ ըսի. "դպրոցը գոց էր, Յունաց դպրոցը կ'երթայի„ պատասխանեց մին։ Յառաջ երթալ այլ եւս պէտք չէ, ահաւասիկ իրենց յետամնացութեան պատճառը. արգելք մը որ շատ տեղերու մանկանց յառաջադիմութիւնը կը խափանէ։ Բայց ոչ. լսածիս համաձայն՝ ունին այժմ Նազիլլիի Հայք եւս երկու անձէ կազմեալ հոգաբարձութիւն մը, որոնք դպրոցն յառաջացընելու մտադիր են։

Այտըն նմանապէս ունի եկեղեցւոյն քով երկսեռ դպրոց մը, որ եւ գեղեցիկ տեսք եւ օդաւէտ դիրք ունի։ Դպրոցս ունի ընդարձակ սրահ մը եւ ուրիշ երկու սենեակներ, որոնցմէ մին ժա-

digitised by A.R.A.R.@